ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2019/71

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Բողոք բերող՝«Վերիտաս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Մ. Համբարձումյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/2» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական սարքավորումների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Վերիտաս» ՍՊԸ-ի, (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 03.10.2019թ.-ին ներկայացված բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Վերիտաս» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով խնդրել է՝ արգելել ՀՀ առողջապահության նախարարությանը ընդունել որոշումներ, կնքել պայմանագրեր, ինչպես նաև պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/2» ծածկագրով գնման ընթացակարգը, իսկ վերահայտարարելու դեպքում վերացնել բողոքով նկարագրված խախտումները:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 03.10.2019թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ ու 08.10.2019թ.-ին, 16.10.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 16.10.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.10.2019թ.-ին:

2. <u>«Վերիտաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Վերիտաս» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

« 1.1 ՀՀ առողջապահության նախարարության կողմից 25.09.2019թ. Հայտարարվել է ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/2 ընթացակարգը: Գնման առարկա բժշկական սարքավորումներ:

1.2 Տեխնիկական բնութագրերը կազմված են սխալ, իրենց մեջ պարունակում են գոյություն չունեցող ապրանքներ, նշված չեն պահանջվող ապրանքների չափման միավորները:

1.3 Հրավերի հայերեն և ռուսերեն տարբերակների միջև առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես հայերեն տարբերակի չորրորդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում գրված է «Կանգնակի պատման անկյունի տիրույթը ոչ պակաս քան 30 °-ից մինչև +120 °», մինչդեռ ռուսերեն տարբերակում այլ ավելի լայն միջակայք է գրված և սկսվում է մինուս 30°-ից և գրված է «ОТ-30° ДО+120 °» Եվս մեկ օրինակ, հայերեն տարբերակում գրված է, «Բնակարանային վահանակի դետեկտորի բնութագրերը», իսկ ռուսերեն տարբերակում «Характеристики плоско-панельного детектора»:

1.4 Հրավերի յոթերորդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում գրված է «Մանրէաբանական էֆեկտիվություն՝ ոչ պակաս 99.99% պահանջը»: Արտադրող մի շարք ընկերություններից ստացված պատասխանների համաձայն 99.99% արդյունավետությամբ ռեցիրկուլյատորներ չեն արտադրվում:

1.5 Հրավերի յոթերորդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում ճառագայթումը ոչ պակաս քան 24: Գրած չէ չափման միավորը:

1.6 Հրավերի 5-րդ էջի չորրորդ պարբերություն գրված է, որ «Սույն գնման ընթացակարգը հայտարարվում է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան» մինչդեռ Armeps համակարգում հստակ նշված են ձեռք բերման ենթակա ապրանքների գնման գները:

Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

ա) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

բ) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Հարկ է նշել, որ Armeps համակարգում հստակ նշված են սույն ընթացակարգով ձեռք բերման ենթակա ապրանքների գնման գները, ուստի Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառման իրավական հիմքերը բացակայում են:

Բացի այդ, ՀՀ 2019 թվականի ՀՀ Կառավարության 27 հունիսի 2019 թվականի N 783-Ն որոշման Հավելված N 3-ի համաձայն, 31002 ծրագրով ՀՀ առողջապահության նախարարությանը հատկացվել է 2,076,786.2 ՀՀ դրամ, հետևաբար ֆինանսական միջոցները առկա են, իսկ Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառումը ոչ իրավաչափ:»:

Ելնելով վերոգրյալից, «Վերիտաս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ արգելել ՀՀ առողջապահության նախարարությանը ընդունել որոշումներ, կնքել պայմանագրեր, ինչպես նաև պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/2» ծածկագրով գնման ընթացակարգը, իսկ վերահայտարարելու դեպքում վերացնել բողոքով նկարագրված խախտումները:

3. <u>ՀՀ առողջապահության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 03.10.2019թ.-ի գրությամբ դիմել ՀՀ առողջապահության նախարարությանը՝ (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 03.10.2019թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 07.10.2019թ.-ին թիվ Մ-44910-2019 գրությամբ ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Առողջապահության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/2» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ՝ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի կապակցությամբ, Առողջապահության նախարարությունը ունի իր դիտողությունները: Մասնավորապես.

Բողոքի 1.2 կետը ընդունելի չէ, քանի որ հստակ նշված չեն այն ապրանքները, որոնք ըստ բողոքաբերի գոյություն չունեն: Բացի այդ, նման խնդիր այլ մասնակիցների կողմից երբևիցե չի բարձրացվել:

Բողոքի 1.3 կետով բարձրացված հարցադրման մասով հայտնում եմ, որ Հրավերի պահանջը 4-րդ չափաբաժնի մասով՝ կանգնակի պտտման անկյունի տիրույթի համար սահմանված էր 30°–ից մինչև 120°, սակայն ռուսերեն տարբերակում «30°» բառից առաջ դրված էր «-» նշանը, որը չի նշանակում «մինուս»: Հետևաբար, առաջարկվում է բողոքը այս մասով չդիտարկել:

Իսկ ինչ վերաբերվում է նույն չափաբաժնի հայերեն և ռուսերեն տեխնիկական բնութագրերի՝ բողոքաբերի կողմից նշված տարբերությանը, ապա այն հանդիսանում է ռուսերենից հայերեն թարգմանության վրիպակ, ինչը այլ մասնակիցների կողմից հասկացվել է (հարցադրումների բացակայության հիմքով) և, որը չի հանգեցնում տվյալ ապրանքի տեխնիկական բնութագրի որևէ չափանիշի երկակի մեկնաբանության: Ուստի, առաջարկվում է այս մասով ևս բողոքը չդիտարկել:

Բողոքի 1.4 կետի մասով 7-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում գրված պահանջը՝ «Մանրէաբանական էֆեկտիվությունը՝ ոչ պակաս քան 99,99 %» ճիշտ է: Մասնավորապես, քանի որ այդ լամպերը օգտագործվելու են վիրահատարաններում, այլ ոչ թե ուրիշ բաժանմունքներում, ուստի պետք է ունենալ բարձր էֆեկտիվությամբ սարք: Նշեմ նաև, ըստ մասնագետների դիտարկման, արտադրվում են նաև 99,999%

արդյունավետությամբ ռեցերկույյատորներ: Հետևաբար, բողոքաբերի հարցադրումը այս մասով հիմնավոր չէ և առաջարկվում է այն ևս չդիտարկել:

Բողոքի 1.5 կետով 7-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում ճառագայթման չափման միավորը նշված չէ, քանի որ գոյություն ունի ճառագայթման միայն մեկ չափման միավոր՝ Վտ, ինչը նշված է ռուսերեն տարբերակում: Ուստի առաջարկվում է այս կետով բողոքը ևս չդիտարկել:

Իսկ ինչ վերաբերվում է բողոքաբերի այն մեջբերմանը, թե մրցույթը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան՝ առանց ֆինանսական միջոցների, մինչդեռ առկա են ֆինանսական միջոցներ, հայտնում եմ, որ Օրենքի այս կետը կիրառվել է հետևյալ փաստարկների հիման վրա.

1. Առողջապահության նախարարությունը չի կարողացել նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը:

2. Մատակարարման պայմաններից ելնելով (մատակարարումը 180 օրացուցային օր) կնքվելիք պայմանագրերի կատարումը իրականացվելու են 2020 թվականի ընթացքում:

Միաժամանակ հայտնում եմ, որ Առողջապահության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում նախատեսվում է ձեռքբերել բժշկական ժամանակակից սարքավորումներ՝ Կոտայքի մարզի «Չարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ տարածաշրջանի բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների որակը, ինչպես նաև հասանելիությունը բարձացնելու նպատակով: Նշված առողջապահական կազմակերպության անհրաժեշտ սարքավորումներով վերազինումը կհանգեցնի տեղի բնակչությանը բժշկական օգնության ծառայությունների պատշաճ մատուցմանը, ինչպես նաև կնվազեցնի մանկական մահացության ռիսկերը և կբարձրացնի ծննօգնության մակարդակը:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/71 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ առողջապահության նախարարության կողմից բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով 25.09.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/2» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան:

Armeps.am/PPCM/ կայքում առկա տվյալների համաձայն՝ Պատվիրատուի կողմից հայտարարված գնման ընթացակարգի բոլոր 32 չափաբաժինների համար գնումների պլանով նախատեսված ԳՄԱ դասակարգման (CPV) միջանցիկ ծածկագրերով նախատեսված են ֆինանսական միջոցներ:

Նույն կայքում առկա տվյալների համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել 14 կազմակերպություններ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 03.10.2019թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանը հաստատվում է բյուջետային ծախսերի գերատեսչական և գործառնական դասակարգմամբ:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը,

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ...:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ առողջապահության նախարարության կողմից բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով 25.09.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ ընթացակարգը հայտարարվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան:

Armeps.am/PPCM/ կայքում առկա տվյալների համաձայն՝ Պատվիրատուի կողմից հայտարարված գնման ընթացակարգի բոլոր 32 չափաբաժինների համար գնումների պլանով նախատեսված ԳՄԱ դասակարգման (CPV) միջանցիկ ծածկագրերով նախատեսված են ֆինանսական միջոցներ:

Նույն կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել 14 կազմակերպություններ:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Սույն գործում առկա փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ առողջապահության նախարարությունը բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգը հայտարարելով Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, գործել է ոչ իրավաչափ, քանի որ Ընթացակարգի 32 չափաբաժինների համար գնումների պլանով նախատեսված ԳՄԱ դասակարգման (CPV) միջանցիկ ծածկագրերով նախատեսված են ֆինանսական միջոցներ, որպիսի պայմաններում օրենքի վերոնշյալ հոդվածի կիրառումը հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուն գնման ընթացակարգը Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով հայտարարելու արդյունքում գնման հնարավոր մասնակիցների համար մրցակցության հավասար պայմանների որևէ սահմանափակում, ինչպես նաև գնումների գործընթացում մրցակցության համար

չհիմնավորված խոչընդոտներ չի առաջացրել, որին էլ մասնակցության հայտ է ներկայացրել 14 (տասնչորս) մասնակից, որպիսի պայմաններում «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/25/2» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու համար բավարար հիմքեր առկա չեն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընկերության կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները անհիմն են, իսկ Պատվիրատուի գործողությունների արդյունքում չեն սահմանափակվում հնարավոր մասնակիցների հավասար իրավունքները: Հատկապես այն դեպքում, երբ Պատվիրատուի կողմից ներկայացված բողոքի առարկություններով հերքվում են Բողոքաբերի կողմից նշված հնարավոր մասնակիցների մրցակցության և գնումների օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման առկայությունը: Իսկ մասնակցության հայտ ներկայացրած 14 (տասնչորս) մասնակիցների առկայության ու բողոքաբերի ընթացակարգին չմասնակցելու հանգամանքները վկայում են, որ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքի խախտում նույնպես առկա չէ, որպիսի պայմաններում ապահովվել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ինչ վերաբերում է Ընկերության բողոքի 1.2, 1.3, 1.4 և 1.5 կետերով նշված հանգամանքներին, ապա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ գնման առարկայի տեխնիկական բնութագրերը կազմվել են Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջներին և պայմաններին համապատասխան, իսկ ռուսերեն կազմված հրավերով որոշ ակհայտ տեխնիկական վրիպակները չեն կարող հանգեցնել հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրի որևէ չափանիշի երկակի մեկնաբանության կամ տարընկալման, հատկապես այն դեպքում, երբ հրավերի վերաբերյալ պարզաբանում տրամադրելու մասին հարցումներ չեն ներկայացվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 03.10.2019թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2019/71 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**